28 ԱՊՐԻԼ 2012 ՇԱԲԱԹ 77(4929)

Ազգ
Azg
ISSN: 1829-1651

# Նալբանդյանը վաղը կմեկնի Իրան

Իրանի շուրջը զարգացումների, ինչպես նաեւ Հայաստանում եւ ընդհանրապես տարածաշրջանում իրադրության ներկա ֆոնին բավականին հետաքրքական մի ժամանակահատվածում Հայաստանի արտգործնախարարը մեկնելու է Իրան:

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից, ապրիլի 29-30-ը արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այցով կմեկնի Թեհրան:

Իրանում նախատեսվում են Նալբանդյանի հանդիպումները Իրանի բարձրաստիճան ղեկավարության հետ: Այլ մանրամասներ, մասնավորապես, թե հատկապես ո՞ր բարձրաստիճան ղեկավարի հետ է հանդիպելու Նալբանդյանը կամ ի՞նչ օրակարգով է մեկնում Թեհրան, չի նշվում:

# Երեք զոհ սահմանում. Նախագահը խոստանում է՝ պատասխանն անխուսափելի է

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առավոտյան ժամը չորսի սահմաններում Տավուշի մարզի Այգեպար-Մովսես գյուղերի միջեւ ընկած ճանապարհահատվածում հակառակորդը կրկին խախտել է հրադադարն ու կրակ բացել հայկական դիրքերի ուղղությամբ: ՀՀ ՊՆ զորամասի պայմանագրային զինծառայողներից մեկին պատկանող «ՎԱԶ 2107» մակնիշի ավտոմեքենայով երթեւեկելիս հակառակորդից հրազենային մարմնական վնասվածքներ են ստացել վարորդն ու եւս երկու պայմանագրային զինծառայողներ: Երեք զինվորներն էլ մահացել են: Նրանցից երկուսը՝ Բերդի հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին, երրորդը՝ հոսպիտալում: Դեպքի վայրի զննության ժամանակ հրազենային հետքեր են հայտնաբերվել նաեւ ավտոմեքենայի վրա: Պաշտպանության նախարարությունը, հաստատելով վերոնշյալ տեղեկատվությունը, ուղարկված հաղորդագրությունում միայն ավելացնում է, որ ՊՆ քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

Փաստորեն վերջին երեք-չորս օրերին սա երրորդ դեպքն է, երբ հակառակորդը մահացու կրակ է բացում հայկական դիրքերի եւ բնակավայրերի ուղղությամբ: Ապրիլի 24-ին հակառակորդը կրակել էր ղարաբաղյան դիրքերի ուղղությամբ՝ սանիտարական մեքենայի վրա, ինչի հետեւանքով վիրավորվել էին ՊԲ զինծառայողներ Անդրանիկ Մադոյանն ու Էռնեստ Սարգսյանը: Ապրիլի 25-ին հակառակորդը 45 րոպե գնդակոծել էր Տավուշի մարզի Դովեղ գյուղը. տարհանվել էին մանկապարտեզն ու դպրոցը, բազմաթիվ գյուղացիների տներ վնասվել էին, վնասվել էր նաեւ գյուղացիներից մեկի մեքենան:

Թեեւ ուշացումով, սակայն ադրբեջանական կրակոցներին արձագանքեց նախագահ Սերժ Սարգսյանը, Ստեփանավանի բնակիչների հետ հանդիպմանը:

Տես էջ 3

# Էներգետիկ հարցերի պրոֆեսիոնալ «խրախուսողը»՝ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի թեկնածու

Թուրքիայում հանգրվանած ու թերեւս փորձագիտական հարթակում խորհուրդներ վաճառող ամերիկյան դիվանագիտական կորպուսի նախկին անդամ, որ սիրում էր որպես արհեստավարժ դիվանագետ ներկայանալ, Մեթյու Բրայզային, որ այդպես էլ չկարողացավ նստած մնալ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի աթոռին, կարծես փոխարինող է գտնվել, այն էլ տարածաշրջանի իմացության ընդգծված պաշարով:

Ինչպես տեղեկացնում է ադրբեջանական մամուլը՝ հղում անելով



Սպիտակ տան ապրիլի 26-ի ճեպազրույցում արված հայտարարությանը, Բարաք Օբաման Կոնգրեսին Ադրբեջանում դեսպանի նոր թեկնածու է առաջարկել ի դեմս ԱՄՆ պետքարտուղարության Եվրասիայում էներգետիկ հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Մորնինգսթարի:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի թեկնածությունը ԱՄՆ օրենսդիր մարմնում չհաստատեցին դեռեւս 2010-ի վերջում: Ու թեեւ, շրջանցելով ԱՄՆ Սենատը, նախագահ Բարաք Օբամայի կողմից նշանակվել էր այդ պաշտոնում, սակայն մինչեւ 2012-ի հունվար այդպես էլ Սենատի կողմից չհաստատվեց իր պաշտոնում ու ստիպված եղավ ճամպրուկները կապել:

Դեսպանի թեկնածու Մորնինգսթարը 2009-ից ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի կողմից նշանակվել է եվրասիական էներգետիկայի հարցերով հատուկ ներկայացուցիչ: Մինչ այդ նա դասավանդում էր Հարվարդի համալսարանի Քենեդու անվան կառավարման դպրոցում՝ նախորդած դասախոսական գործունեության ընթացքում հանգրվանած լինելով տարբեր հայտնի հաստատություններում:

Սթանֆորդի բարձրագույն դպրոցում իրավաբանական կրթություն ստացած Մորնինգսթարի կենսագրականում առավել հետաքրքրական է, որ նա 1993-95 եղել է Օտարերկրյա մասնավոր ներդրումների կորպորացիայի փոխնախագահ, 1995-98-ին եղել է ԱՄՆ նախագահի եւ պետքարտուղարի հատուկ խորհրդականը ԱՊՀ երկրներում ԱՄՆ-ի հետ երկկողմանի եւ առեւտրային ներդրումային գործունեության հարցերով:

Այդուհետեւ իր գործունեությունը Ադրբեջանում ՄԱՆ դեսպանի ներկայիս թեկնածուն շարունակել է որպես ԱՄՆ նախագահի եւ պետքարտուղարի հատուկ խորհրդական Կասպյան ավազանի էներգետիկ դիվանագիտության հարցերով՝ պատասխանատու լինելով Կասպյան շրջանում ԱՄՆ քաղաքականության ու էներգետիկ փոխադրումների առավելագույն կոորդինացումն ապահովելու համար:

Ռիչարդ Մորնինգսթարը նաեւ արտաքին քաղաքականությանն առնչվող հոդվածների հեղինակ է, այդ թվում՝ այնպիսի նյութերի, որոնք վերաբերում են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան եւ այլ նմանատիպ էներգետիկ նախագծերի, ինչն ակնհայտ է դարձնում, որ այս թեկնածուի պարագայում էլ Բաքվի ղեկավարության հետ քաջածանոթ լինելը անհրաժեշտություն է եղել, ավելին՝ Մորնինգսթարը փաստացի ԱՄՆ էներգետիկ շահերի պրոֆեսիոնալ է:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Միասնական շտաբը դիմում է Սահմանադրական դատարան

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ընտրակեղծիքների դեմ պայքարի նպատակով ստեղծված միասնական շտաբի երեկվա նիստում հայտնի դարձավ, որ ապրիլի 25-ին այս շտաբը որոշել է դիմել Սահմանադրական դատարան՝ ընտրությունների մասնակիցների ցուցակը հրապարակելը սահմանադրորեն թույլատրելի համարելու որոշում ակնկալելով:

Այդպիսի որոշումը հրատապ է նրանով, որ ըստ շտաբի համակարգող Հմայակ Հովհաննիսյանի՝ ե՛ւ մասնակից քաղաքական ուժերը, ե՛ւ Հայաստանի ընտրողը մտահոգված են մոտ 2,5 մլն ընտրողների՝ ակնհայտորեն ուռճացված թվով: Տարբեր կարծիքներով ուռճացման թիվը տատանվում է մինչեւ 700 հազարի սահմաններում, իսկ կոնկրետ միասնական շտաբի կարծիքով այդ թիվը 400 հազարի սահմանում է: Որպեսզի դիմեն Սահմանադրական դատարան՝ հարկավոր է Ազգային ժողովի պատգամավորների 1/3-ի ստորագրությունը (ընդամենը 27 պատգամավորի), որն ապահովվում է ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի պատգամավորների ստորագրությամբ: Բացի Վարդան Օսկանյանից՝ ԲՀԿ-ից շտաբի նիստին ներկա էր Վահե Էնֆիաջյանը, որի խոսքով՝ ԲՀԿ-ից 20 պատգամավորի ստորագրություն արդեն առկա էր: Չնայած մենք հիշեցրինք, որ ընտրությունների մասնակիցների ցուցակի հրապարակման՝ խորհրդարանական ընդդիմության նախաձեռնությանը ժամանակին ԲՀԿ-ն չէր միացել, մինչդեռ այն ժամանակ էլ շատ լավ հասկանալի էր, որ ուռճացված ցուցակների խնդիրն առաջանալու է (եւ միշտ էլ առաջացել է): Միասնական շտաբի նիստում հենց այդ պատճառով համարյա հռետորական հարց հնչեցրինք, եթե ՍԴ-ն այդպիսի որոշում չընդունի, արդյոք այս շտաբի անդամ կուսակցությունները հետագա գործելակերպի այլ փաթեթ քննարկե՞լ են, օրինակ՝ ընտրությունները բոյկոտելու, քանի որ ընտրությունների ուռճացման նպատակը, բոլորս գիտենք, ընտրությունների արդյունքների վրա այս հնարավորությամբ ազդելն է, հետեւաբար միասնական շտաբի ջանքերը կա՛մ ապարդյուն են, կա՛մ ի սկզբանե իմիտացիայի երեւույթն ունեն: Չէ, այդպիսի հարց շտաբում չեն քննարկել:

Տես էջ 3

# Եվս մի հռչակագիր

**Երեկ «Անի Պլազա» հյուրանոցում համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հանդիպման ավարտին, կուսակցությունների լիազորված անձանց առաջարկով ստորագրվել է հռչակագիր: Հռչակագրի տակ իրենց ստորագրությունը դրած ընտրությանը մասնակից 9 քաղաքական ուժերը հետամուտ են լինելու իրենց կուսակցությունների որդեգրած քաղաքացիական հասարակության կայացման քաղաքականությանը, համագործակցելու են քաղաքացիական հասարակության կառույցների հետ՝ նրանց ներգրավելով որոշումների կայացման եւ հանրային քաղաքականության ձեւավորման գործընթացներում, բարելավելու են քաղաքացիական հասարակության կառույցների դաշտը կարգավորող օրենսդրությունը, ապահովելու են պետական մարմինների գործունեության եւ նրանց ընդունած որոշումների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության արդյունավետ մեխանիզմները, խթանելու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը օրենքների կիրառման մշտադիտարկման գործընթացում: Այս բոլորով, այդպիսով նպաստելու են քաղաքացիական հասարակության ձայնը նոր Ազգային ժողովում լսելի դարձնելուն:**

**Իհարկե, հռչակագիրը միայն թուղթ է, եւ պարզ չէ, թե այդ թղթով ինչպե՞ս են լսելի դարձնելու քաղաքացիական հասարակության ձայնը, քանի որ հենց միայն ողջ հասարակության՝ սովորական ընտրողի ձայնը դեռ լսելի դարձնելու խնդիր ունենք արդար ընտրություններով: Սակայն քանի որ ամեն ինչ թղթերից էլ սկսվում է մեր երկրում՝ մի թուղթ ավել-պակաս, իսկ եթե իսկապես հռչակագրի նպատակներից մեկ-երկուսն իրականություն դառնան՝ միայն ուրախ կլինենք:**

Մ. Խ.

# Սումգայիթ՝ միշտ սատանայական քաղաք

Խոսքը չի վերաբերում 1988-ի փետրվարյան Սումգայիթին, այլ՝ այսօրվա: Ըստ ադրբեջանական մամուլի, այդ քաղաքը հանցավորության ցուցանիշներով առաջինն է: Սումգայիթը նաեւ առաջինն է ինքնասպանությունների թվով: Բայց այն, ինչ այդ քաղաքում կատարվում է վերջին օրերին, լուրջ անհանգստացրել է Ադրբեջանի ողջ իրավապահ համակարգին: Սումգայիթում համառորեն լուրեր են տարածվել, որ «գործում է մանկասպանների մի դաժան խումբ, որը հետապնդում է ուշ ժամերին փողոցում հայտնված միայնակ երեխաներին, սպանում, մասնատում դիակները եւ գցում քաղաքով մեկ»:

Լուրերն այնքան համառ են, որ սումգայիթցի ծնողներն ստիպված են երեխաներին անձամբ դպրոց, դպրոցից տուն բերել: Իրավիճակի մասին տեղեկանալու նպատակով Սումգայիթ մեկնած vesti.az-ի թղթակիցը քաղաքի շուկայում եւ այլ մարդաշատ վայրերում անձամբ է մանկասպան խմբերի մասին լսել տասնյակ անձանցից: Նա դիմել է ոստիկանության Սումգայիթի քաղաքային վարչություն: Այստեղ լրագրողին ասել են, որ տեղյակ են քաղաքում տարածված լուրերին, սակայն «որեւէ փաստ դեռեւս չունենք»:

Լրագրողական հետաքննության արդյունքները, մինչդեռ, ապացուցել են, որ անցած օրերին առնվազն մեկ երեխայի անհայտացման մասին է ոստիկանությունը տեղեկացված: Խոսքը 13-ամյա մի տղայի մասին է, որի հայրը «գտնվում է Ռուսաստանում՝ արտագնա աշխատանքի, իսկ մայրը հավաքարարուհի է»: Երեխան սոցիալական անտանելի պայմանների պատճառով դպրոց չէր հաճախում եւ «օրվա ապրուստը հայթայթում էր գունավոր մետաղներ հավաքելով եւ ընդունման կետ հանձնելով»: Տղայի անհայտացման մասին մայրը ոստիկանությանը տեղեկացրել է, երբ երկու օր որդին տուն չի եկել: Ոստիկանությունը կազմակերպել է որոնում, սակայն՝ ապարդյուն:

Որոշ տեղեկություններով, վերջին անգամ տղային տեսել են Սումգայիթի ծովեզրյա զբոսայգում: Ոստիկանությունը «հույս ունի, որ տղան փախել է Բաքու, որտեղ ապրուստի միջոցներ գտնելն ավելի հեշտ է»: Նույն օրը, երբ vesti.az-ի թղթակիցը լրագրողական հետաքննություն է իրականացրել, Սումգայիթ է այցելել Իլհամ Ալիեւը եւ «ներկա գտնվել երկու գործարանի բացման արարողություններին»: Սա պաշտոնական տեղեկատվություն է: Չի բացառված, որ Սումգայիթում Իլհամ Ալիեւը փորձել է ահաբեկված մարդկանց «պայծառ ապագայի հավատ» ներշնչել:

Ըստ ամենայնի, հայ բնակչության զանգվածային ջարդերից եւ բռնատեղահանությունից քառորդ դար անց էլ Սումգայիթը մնում է սատանայական քաղաք: Աստված պատժում է անիծյալ քաղաքի մարդկանց:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ընտրողի տառապանքը փորձ ունի

Ազատական ու շուկայական հարաբերությունները գործունեության մշակման ու հիմնավոր թիրախ դարձած առաջիկա ընտրությունների որոշ թեկնածուներ հաճախից առավել են նշում եվրոպական երկրներում ահագնացող ինչ-որ տնտեսական իրավիճակի մասին: Տողերիս հեղինակի հասակակիցների թվում էլ քիչ չեն ավագ սերնդի այն ներկայացուցիչները, ովքեր իրենց ապրած ԽՍՀՄ տարիները ճգնում են ներկայացնել սոցիալիզմ հռչակվող մի ժամանակահատված, ուր գոնե առօրյայի նվազագույն խնդիրները լուծելու հոգսը չկար: Նրանք այնուհանդերձ մոռանում են, որ դեպքից դեպք գնված միսը ավելի շատ ոսկորի կտոր էր լինում, տանտիրուհիները իրենց սուղ ժամանակը ծախսում էին կեղտառաս բրինձն ու ոսպը մաքրելու վրա, որպես կանոն բացակայում էր զտված բուսական յուղը, որը միայն արեւածաղկի էր, շաբաթներում էլ առանձնացված տարաներ էին տեղադրվում անորակ հացը հավաքելու համար, իսկ ճաշարաններին կից խոզաբուծման կետեր էին հիմնվում անհասկանալի ծավալների սննդի մնացորդները օգտագործելու համար: Մերօրյա պատգամավորության թեկնածուներից ոմանց թվում է, թե մեր մարդիկ մոռացել են՝ ինչ տնտեսական շրջանում են ապրել, երբ իշխող միակ կուսակցությունը պարտադրված հանրությանը ներկայացրեց «տնտեսությունը պետք է արդյունավետ լինի» կարգախոսը, կարծես այլ տարբերակ կար:

Պատգամավորության թեկնածուներից ոմանք ընտրողների որոշակի հատվածին հաճոյանալու նպատակով պարբերաբար խոսում են մի խումբ եվրոպական երկրներին հատուկ բարենպաստ սոցիալական իրողության մասին, փորձելով ասելիքը ներկայացնել որպես տնտեսական բարեփոխման, նորոգ սոցիալիստական պետության հիմնադրման ապացույց: Որ այդ երկրներում առկա իշխանություն-հանրություն համեմատական փոխըմբռնումը ձեռք է բերվում առավելագույն արդյունավետ աշխատանքի արդյունքում, երբեմն կոշտ մրցակցության պայմաններում, ընտրողներիս լուսաշող ապագա խոստացողները զլանում են նշել, քանզի կարիք կառաջանա մտնելու տնտեսական ոլորտ, ուսումնասիրելու ու վերլուծելու ՀՀ-ում արտադրական ու սպասարկման ծառայությունների որակն ու աստիճանը, դրանց արդյունավետությունն ու շահութաբերությունը, մեր մարդկանց առօրյայի կենսական այլ բաղադրիչները: Այս խնդիրներից շատ բան չհասկացող մեր համաքաղաքացիները առավել հաճախ ներկայանում են հարցեր առաջադրողների դիրքերից. նրանք, օրինակ, տարակուսում են, թե ինչպես է Եվրոպայի սուպերմարկետներում հաջողվում պարբերաբար մսատեսակների 30-50 տոկոսի գնանկում իրականացնել, խոզի ու տավարի մսի 1 կգ-ը վաճառելով ՀՀ արժույթով 1400-1600 դրամի սահմաններում, երբ հայաստանյան առեւտրային ցանցում մեր տնտեսվարողների արտադրածը այս գնի կրկնակին է: Ոմանց այն բացատրությունները, թե ապրանքը թանկանում է ձեռքից ձեռք անցնելով, շատ էլ հիմնավոր չէ, քանզի բազմիցս հեռուստահաղորդումների ընթացքում անասնապահներ ասել են, որ իրենք գնորդներին մեծածախ միսը վաճառում են 2000 դրամի մոտակայքում:

Եթե արծարծված հարցում տարակուսելու կամ բանավիճելու ինչ-որ տեղ կա, երկրի տնտեսության համար պատասխանատուները, ովքեր կան նաեւ այսօրվա ցուցակներում, պարտավոր են բացատրել թե ինչո՞ւ է մեզանում թանկ հայրենի ընդերքից հոսող շշալցված հանքային ջուրը, որպիսի արտադրանքը եվրոպական «Պեննի» սուպերմարկետների ցանցում 1,5 լիտրը վաճառվում է 35 ցենտով, գնանկման հետեւանքով՝ 29 ցենտով, որը հազիվ 150 դրամ է, այն դեպքում, երբ ՀՀ-ում նման գներ վաղուց գոյություն չունեն: Իշխանության որեւէ աստիճանի պաշտոնյա իրեն նեղություն չտվեց պարզելու, թե նախորդ տարում ինչու կտրուկ բարձրացան տեղական արտադրության գարեջրի գները. լիտրը 500 դրամով վաճառվող այս հաճելի ըմպելիքը մեկ օրում դարձավ 580 դրամ, երբ մշտապես գարեջուր օգտագործող ավստրիացիները կարող են ձեռք բերել 0,5 լիտրը 39 եվրոցենտով, որը մեր 200 դրամն է: Մեզանում որեւէ մեկը չունի այս առեղծվածի պատասխանը այն պարզ պատճառով, որովհետեւ պահանջվում է ջանք թափել, ուսումնասիրել, վերլուծել, որը մեր ներկա եւ ապագա ընտրյալների սրտով չէ: Սեփական երկրի արտադրանքն ու հարստությունը շատ հաճախ անհասանելի է հայաստանցուն, որ գնի մատչելիության պարագայում դրանք կունենար իր ամենօրյա ճաշասեղանին, ըմպելուն զուգահեռ օրհնանքի խոսք կուղղեր հայրենի երկրին ու վայելածն իրեն հասցրած արտադրողին: Ցավոք, մեզանում այս պարզ փոխըմբռնումը բացակայում է, չի էլ նշմարվում թե երբ կիրականանա: Ընտրողը մշտապես տարակուսում է, թե ինչու իր ձայնին հավակնող թեկնածուներից եւ ոչ մեկը չի փորձում բարձրաձայնել մեզանում առկա այսօրինակ հարցերը, գերադասելով դրանց մասին խոսել ընդհանրական «մենք գիտենք նաեւ մեր մարդկանց հուզող լուրջ խնդիրների մասին» ձեւակերպմամբ: Արդյունքը լինում է այն, որ արտերկրներում հայտնված մեր հայրենակիցները հուսալքվելով նման անգործությունից, ոչ միայն հիմնավորվում են ՌԴ-ում ու Եվրոպայում, այլեւ իրենց մոտ են տանում հարազատ-բարեկամներին: Հաճախ ենք լսում, որ տաշիրցի կամ քյավառցի այս կամ այն ռուսաստանաբնակ մեծահարուստը իր հովանու տակ է առնում համագյուղացիներին, նրանց ընտանիքների նորօրյա անդամներին: Եվ ինչքան էլ իշխանական որոշ կառույցներ փորձեն մեղմել արտագաղթի ցուցանիշները, դրանք մեր մարդիկ տեսնում են իրենց կողքին. բազմաբնակարան յուրաքանչյուր շենքում առնվազն 2-3 բնակարան մշտապես փակ են:

Եվ այս ամենը հիմնական մեկ պատճառով. շարքային հայաստանցին իր աշխատանքով չի կարողանում հոգալ ընտանիքի նվազագույն կարիքները, չափավոր սննդակարգ ունենալ եւ օգտվել որոշակի ծառայություններից: Աշխարհի 100-ից ավելի երկրներում 1 բնակչին հասանելի 3000-3500 կկալորիայի դիմաց հայաստանաբնակ հարյուրհազարավոր բնակիչներ օրը հազիվ սպառում են 2000-2200 կկալորիա: Գների անբացատրելի ու անհասկանալի բարձրացումներից նրանց վիճակն առավել է վատթարանում, որն էլ հանգեցնում է տխուր մի իրողության՝ ձայների շուկայի կազմավորման: Այստեղ մեկ հիմնական տրամաբանություն է գործում՝ տառապանքս փորձ ունի, որը հուշում է, որ մեզանում ոչինչ չի փոխվի:

Տա Աստված, այս անգամ սխալվենք:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Ավստրիա, Գրաց**

ԱՐԴԵՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

# Ծաղկահավաք, Ծիծեռնակաբերդ



Երեկ ժամը 10-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում մեկնարկել է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) թերեւս ամենագունեղ եւ խորհրդանշական միջոցառումը՝ ծաղկահավաքը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ համատեղ իրականացվող ծաղկահավաքը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բարձունքում հավաքեց բազմաթիվ կամավորների, կազմակերպությունների, տեղական եւ միջազգային կառույցների ներկայացուցիչների, կրթահամալիրների եւ բուհերի ուսանողների, որոնք կյանքի կոչեցին FPWC-ի նախաձեռնությունը՝ նոր կյանք պարգեւելով ապրիլի 24-ին Մեծ եղեռնի հուշարձանի անմար կրակի մոտ նվիրաբերված ոգեկոչման ծաղիկներին:

Ամեն տարի ապրիլի 24-ին հարյուրհազարավոր մարդիկ ոգեկոչում են Մեծ եղեռնի զոհերի հիշատակը՝ ծաղիկներ դնելով Ծիծեռնակաբերդի անմար կրակի մոտ: Օրեր անց այդ ծաղիկները թոշնում են ու տեղափոխվում աղբանոց:

2010 թվականից, սակայն, վերամշակման շնորհիվ արդեն երեք տարի ծաղկահավաքը երկրորդ կյանք է պարգեւում անմեղ նահատակների համար խոնարհված ծաղիկներին:

«Երկրի օրվա» շրջանակներում, անմար կրակի մոտ բերված ծաղիկների ցողուններից պարարտախառնուրդ է ստեղծվում՝ հուշահամալիրի այգիների մշակման համար, իսկ ծաղկաթերթերը խնամքով հավաքվում են, չորացվում, ապա վերամշակվում: Վերամշակված թուղթը օգտագործվում է նաեւ խորհրդանշական ձեւով՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համար հուշագրեր, շնորհակալագրեր եւ հրավիրատոմսեր պատրաստելու համար:

«Թեեւ նախաձեռնողն ենք, բայց մենք ձգտում ենք նրան, որ մեզ հետ, թե առանց մեզ՝ ծաղկահավաքը գեղեցիկ ավանդույթ դառնա եւ շարունակական բնույթ կրի»,-ասել է Վայրի բնության ու մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հիմնադիր **Ռուբեն Խաչատրյանը**:

«Անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող յուրաքանչյուր ծաղիկ հարգանքի տուրք լինելուց բացի՝ կարեւոր դեր կարող է ստանձնել մեր ընդհանուր գործում: Ծաղիկների վերամշակման արդյունքում տպագրված հուշագրերը, շնորհակալագրերն ու հրավիրատոմսերը յուրօրինակ են՝ դրանցում տեսանելի ծաղկի թերթիկների շնորհիվ: Դրանք հաստատում են 20-րդ դարասկզբին իրականացված հայոց ցեղասպանության փաստի անհերքելիությունն ու կոչ անում հիշելու այդ փաստի մասին՝ ինքնատիպ դեսպան դառնալով Հայաստան այցելած օտարերկրացու համար», ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

# Կասկադում մի քանի ժամով կտեղադրվեն աստղադիտակներ

Այսօր աստղագիտության միջազգային օրն է, որը համարվում է շարժական տոն եւ սովորաբար նշվում է ապրիլի կեսերից մինչեւ մայիսի կեսերն ընկած ժամանակահատվածում: Այս մասին տեղեկացանք Հայկական աստղագիտական ընկերությունից:

Սահմանված է այնպես, որ աստղագիտության օրը լինի լուսնի առաջին քառորդին նախորդող շաբաթ օրը: Նախաձեռնությունը սկսել է Հյուսիսային Կալիֆոռնիայի աստղագիտական ընկերության նախագահ **Դագ Բերգերը** 1973 թվականին, երբ բազմաթիվ աստղադիտակներ տեղադրվեցին հասարակական վայրերում, որպեսզի մարդիկ երկնքին աստղադիտակներով նայելու հնարավորություն ունենային: Ներկայումս աստղագիտական մի շարք կազմակերպություններ տարբեր երկրներում սատարում են աստղադիտակներ տեղադրելու իրադարձությունը:

Աստղագիտության օրը նշվում է ամեն տարի, կազմակերպվում են հասարակական դիտումներ, դասախոսություններ, հանդիպումներ՝ հասարակության մեջ աստղագիտական գիտելիքներ եւ հետաքրքրություն տարածելու նպատակով:

Կա նաեւ աստղագիտության աշնանային օր՝ 2012-ի հոկտեմբերի 20-ին:

«Գուդրայք Ձոն» կազմակերպությունը, Ռուբեն Բունիաթյանի գլխավորությամբ, այսօր ժամը 20.30-22.30-ին՝ Կասկադ համալիրի վերեւի հարթակում տեղադրելու է սիրողական աստղադիտակներ, որոնցով բոլոր ցանկացողները կարող են դիտել աստղեր, աստղակույտեր ու երկնքի այլ հրաշալիքներ:

**Ի. Պ.**

# Դեմկուսը միանում է ընտրությունների ժամանակ քաղաքակիրթ մրցակցության կանոններին

Երեկ հայտարարություն էր տարածել Հայաստանի դեմոկրատական կուսակցության հանրապետական խորհուրդը: Ըստ այդմ՝ հիմք ընդունելով 2012 թվականի ապրիլի 14-ին, 17-ին, 19-ին, 23-ին եւ 25-ին ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, ՀԿԿ ներկայացուցիչների կողմից «Ընտրությունների ժամանակ քաղաքակիրթ մրցակցություն ապահովող կանոններ» համատեղ փաստաթղթի նախագծի քննարկումները, կարեւորելով առաջիկա խորհրդարանական ընտրությունների արդար եւ ազատ մրցակցության սկզբունքներով անցկացումը՝ Դեմկուսը հավանություն է տալիս քննարկված նախագծին եւ հետեւելու է նրանում ամրագրված կանոնների պահպանմանը:

# Տեր-Պետրոսյանը ճնշման տասանումներ է ունեցել

ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկ Կապանում տեղի ունեցած նախընտրական հանդիպումների ընթացքում առողջական խնդիրներ է ունեցել եւ չի կարողացել շարունակել քարոզարշավը՝ Մեղրի մեկնելու փոխարեն վերադառնալով Երեւան: Ըստ ՀԱԿ մամլո խոսնակ Արման Մուսինյանի՝ նա ճնշման տասանում է ունեցել: Ավելի վաղ նույն պատճառով Տեր-Պետրոսյանն ապրիլի 24-ին չէր կարողացել այցելել Ծիծեռնակաբերդ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ձեռնարկ եւ իրազեկության բարձրացման կարեւորում Հայաստանի ազգային փոքրամասնությունների համար

Հայաստանում ազգային փոքրամասնությունների համար առաջնային ու հրատապ խնդիր է տարբեր վկայականներում սեփական լեզվի հնչողությամբ ու ձեւին համապատասխանող անուն-ազգանվամբ ներկայացված լինելը, ինչպես նաեւ, հնարավորության դեպքում՝ սեփական ազգության հիշատակումով: Մասնավորապես, օրինակ, ռուսական համայնքի ներկայացուցիչները ցանկանում են իրենց անուն-ազգանունները, հայրանունները տեսնել այնպես, ինչպես դա հնչում է ռուսերենով:

Դրա համար, ի մասնավորի, Հայաստանի արդարադատության նախարարությունը առաջարկում է, որ հարցին լուծում տրվի՝ օգտագործելով նոտարական գրասենյակների ծառայությունները, թարգմանելով ազգանունները կամ հայրանունները այնպես, ինչպես ցանկանում է տվյալ ազգային փոքրամասնության ներկայացուցիչը:

Մեկ այլ կարեւոր հարց էլ ազգային փոքրամասնությունների համար անձնագրերում սեփական ազգությունը նշելու հնարավորությանն է վերաբերում: Տվյալ դեպքում անհրաժեշտություն է առաջանում փաստաթղթային հիմք ներկայացնելու, թե որեւէ անձ այս կամ այն փոքրամասնության ներկայացուցիչ է այն պարզ պատճառով, որ անձնագրում նշվող ազգության տվյալը իրավունքներ է ծնում, ինչը կարող է չարաշահվել:

Օրինակ, որեւէ մեկը կարող է առանց փաստաթղթային հիմնավորման պնդել, թե հույն է՝ ցանկանալով մեկնել Հունաստան, քանի որ հույն լինելու դեպքում հեշտացված է Հունաստանի քաղաքացիության տրամադրումը: Ասել է թե միշտ չէ, որ ազգային փոքրամասնության ներկայացուցիչն է ներկայանում որպես այդպիսին, ինչպիսի կեղծիքներից խուսափելու համար ազգությունը անձնագրում նշելու համար համապատասխան փաստաթղթեր են պահանջվում:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի նախաձեռնությամբ երեկ տեղի ունեցած աշխատաժողովը նվիրված էր միջազգային եւ ազգային օրենսդրությամբ ամրագրված փոքրամասնությունների իրավունքներին ու քաղաքական գործիչների, լրատվամիջոցների եւ հասարակական լայն շերտերի շրջանում դրանց վերաբերյալ իրազեկության բարձրացման մեխանիզմներին: Աշխատաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Հայաստանի նախագահի աշխատակազմից, արտաքին գործերի նախարարությունից, ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող պետական այլ կառույցներից, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, ինչպես նաեւ Հայաստանում ազգային փոքրամասնությունների համայնքներից:

Մասնակիցներին ներկայացվեց ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող փաստաթղթերի ընտրանին, որ պատրաստել է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը՝ Հայաստանի ԱԳՆ-ի եւ կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերի վարչության հետ համագործակցությամբ: Ձեռնարկում ներկայացված են ինչպես Հայաստանի վավերացրած միջազգային պայմանագրերի՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ դրույթները, այնպես էլ խորհրդատվական բնույթի փաստաթղթեր եւ քաղվածքներ Հայաստանի օրենսդրությունից:

Ձեռնարկը հայերենով հասանելի է նաեւ էլեկտրոնային տարբերակով՝ ԵԱՀԿ կայքէջում: Ըստ աշխատաժողովի մասնակիցների, փաստաթղթերի այսօրինակ հավաքածուն հնարավորություն կտա բարձրացնելու ազգային փոքրամասնությունների իրավունքների իրազեկությունը ոչ միայն փոքրամասնությունների ներկայացուցիչների, այլեւ նրանց մեջ, ովքեր կիրառում են այդ իրավունքները՝ պետական աշխատողներից մինչեւ իրավապաշտպան կառույցներ:

Ա.Հ.

# Երեք զոհ սահմանում. Նախագահը խոստանում է՝ պատասխանն անխուսափելի է

*1-ին էջից*

«Այս օրերին ադրբեջանական կրակակետերից շարունակվում են գնդակոծվել մեր տարածքները: Վերջին դեպքերին տեղյակ եք, նախ՝ մանկապարտեզն է կրակակետերի կիզակետում, հետո՝ սահմանային մեքենան, ունեցել ենք երեք պայմանագրային զինվորների կորուստ Տավուշի շրջանում, վիրավորներ էլ ունենք: Թող ոչ ոք չմտածի, որ կարող է օգտվել մեր երկրում ընթացող քաղաքական գործընթացներից եւ մտածի, թե մեր գլուխը խառն է ընտրություններով: Մենք ունենք ամուր բանակ եւ համապատասխան քայլերի կդիմենք: Կարծում եմ՝ ոչ ոք չի կասկածում մեր պաշտպանական ուժերի հզորությանը», հայտարարել է նախագահը՝ շեշտելով, որ կատարվածի պատասխանն անխուսափելի է:

Երեկ ԱԳՆ մամուլի քարտուղար **Տիգրան Բալայանի** հետ զրույցում պարզ դարձավ, որ Դովեղ գյուղում կատարվածի առնչությամբ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի աշխատակիցները մի քանի օրից կհետազոտեն տեղանքը: Դովեղ գյուղում կատարվածի վերաբերյալ **«Ազգ»** օրաթերթն արդեն ներկայացրել է իր դիրքորոշումն ու տեսակետները: Թեպետ ԱԳՆ-ի հավաստիացումներին, որ անհրաժեշտ ամեն ինչ անում են եւ նրանց ներկայացնում կատարվածը, այնուամենայնիվ, ապրիլի վերջին Հայաստան ժամանող մասնագետները Դովեղում ի՞նչ պետք է տեղազննեն: Միթե չէ՞ր լինի հենց նույն րոպեին գրել կամ զանգահարել ու Հայաստան հրավիրել ոչ թե Կասպրչիկի ներկայացուցիչներին, այլ հենց նրան. վերջիվերջո մի ողջ գյուղի անվտանգություն այդ պահին, եւ չի բացառվում՝ նաեւ ապագայում, վտանգված է: Ինչ վերաբերում է երեկվա միջադեպին, նշենք, որ ճանապարհը, որով անցել է մեքենան, գյուղից գտնվում է 300 մետր հեռավորության վրա, եւ այդ ճանապարհով այդ րոպեին կարող էին անցնել ոչ միայն զինվորականներ, այլեւ սովորական քաղաքացիներ՝ մայրեր, երեխաներ:

Հիշեցնենք, որ միջազգային ռազմական իրավունքն արգելում է ռազմական ուժ կիրառել սահմանային մեքենաների, մանկապարտեզների, դպրոցների նկատմամբ, մինչդեռ Ադրբեջանը շարունակում է խախտել միջազգային իրավունքի նորմերը: Ցավալի է, որ միջազգային ուժերից Ադրբեջանի ձեռքը բռնող, ականջը քաշող առայժմ չկա, գուցե նաեւ այն պատճառով, որ պատկան գերատեսչությունները՝ ՀՀ ՊՆ, նախագահի աշխատակազմ, ԱԳՆ եւ Ազգային անվտանգության խորհուրդ անհրաժեշտ եւ ճիշտ ժամանակին հայտարարություններ չեն կատարում միջազգային հանրությանը կատարվածի ողջ լրջությունն ու Ադրբեջանին՝ որպես փաստացի ագրեսորի, ներկայացնելու:

Ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը երեկ երեկոյան հայտարարություն տարածեց, որ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի Աղդամի հատվածում սպանվել է ադրբեջանական բանակի 24-ամյա լեյտենանտ Վագիֆ Աբդուլաեւը: Ըստ այդ տեղեկության՝ սպան սպանվել է հայկական զինուժի կրակոցից: Սպայի զոհվելու փաստը հաստատել է նաեւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, Աբդուլաեւին անվանելով շեհիդ՝ նահատակ:

# Միասնական ցուցակը դիմում է Սահմանադրական դատարան

*1-ին էջից*

ՍԴ-ից դրական լուծում ակնկալելը **Հմայակ Հովհաննիսյանը** բացատրում էր այն հիմնական փաստարկով, թե մասնակիցների քվեարկության գաղտնիությունն ամենեւին պետք չէ հավասարացնել մասնակցության գաղտնի պահելուն, ինչն արվում է, քանի որ պետությունն ու իշխանությունը սերտաճել են, եւ այդ տեղեկատվության գաղտնիությունն ի շահ իշխանության է օգտագործվում: Ցուցակը լիազորել էր իրավաբան Վահե Գրիգորյանին՝ հայցը ներկայացնել ՍԴ, որը հայցի ներկայացման իրավաբանական հիմքերի մասին խոսելով նշեց, թե ընտրությունների մասնակիցների ցուցակների հրապարակման մասին որոշում կայացնելով ՍԴ-ն նաեւ իր իրավունքն է պաշտպանում, քանի որ ընտրական վեճեր լուծելիս սահմանափակվում է ընտրության մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ՍԴ իրավունքը նաեւ: Ընտրությունների մասնակիցների ցուցակների վերաբերյալ տեղեկատվությունը տիրապետում է միայն ԿԸՀ-ն՝ պետական մարմինը, դա համարյա գաղտնիության է հավասարվում, ինչը միջազգային իիրավունքի տեսակետից անընդունելի է. ընտրությունների արդյունքը ընտրողների կողմից ստորագրված ցուցակով է փաստվում, մինչդեռ դա գաղտնի կնիքի տակ է:

**Վարդան Օսկանյանը** նույնպես նշեց, որ այլընտրանք չկա, պետք է ՍԴ դիմել, այնքան որ ցուցակների անճշտությունները զանգվածային են, եւ հույս ուներ, որ ՍԴ-ն ողջամիտ ժամկետում որոշում կկայացնի: Նա հրապարակեց ուռճացված ցուցակների վերաբերյալ սեփական ուսումնասիրությունների մի քանի նմուշ, օրինակ՝ նույն անուն-ազգանունները մեկ տառի տարբերությամբ կամ մեկ աննշան տարբերությամբ կրկնվում են. օրինակ՝ Պողոսյան Արսեն Վահագնի, Պաղոսյան Արսեն Վահագնի, այս կարգի կրկնությունները տասնյակներով են հայտնաբերվում, ըստ Օսկանյանի, եթե հատուկ համակարգչային ծրագիր չդրվի՝ դրանք դժվար է հայտնաբերելը, եւ այդ կրկնությունների մեջ, որոնք հարյուրհազարավոր են, Օսկանյանը միտում եւ հանձնարարական է տեսնում:

ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանն** էլ նշեց, թե շատ են այն հասցեները, որտեղ տասը եւ ավելի ընտրողներ են գրանցված: Իրենց դիտարկումներով եկել են այն եզրակացության, որ 4 սոկոս բնակարաններում 20 տոկոս ընտրող է գրանցված, կան շենքեր, որոնց հասցեները նշված են, ընտրողներով հանդերձ, բայց այդպիսիք չեն հայտնաբերվում, եւ մի շարք այլ տեսակի ընտրակեղծիքներ, որոնց դեմ ցուցակն ուզում է պայքարել:

Ի դեպ, նիստին հայտնի պատճառներով չմասնակցող «Ժառանգությանը» նույնպես տեղյակ է պահվել ՍԴ դիմելու համար պատգամավորների ստորագրությունների անհրաժեշտության մասին, որին միանալու համար ժառանգականները խնդիր չեն տեսնում:

Արդեն երեկոյան կողմ Վարդան Օսկանյանը ֆեյսբուքի իր էջում գրել էր, թե շատ կարեւոր քայլ է Սահմանադրական դատարան դիմելու եւ մայիսի 6-ի ընտրությանը մասնակցածների ամբողջական ցուցակի հրապարակումը պահանջելը:

## Հիպոթեքային վարկեր ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ



*Զարգացման Հայկական Բանկը բնակարանի ձեռքբերումը հասանելի է դարձրել գրեթե բոլորին, նաև այն անձանց, ովքեր չունեն կանխավճարային միջոցներ:*

Այսօր շատ շատերն են դիմում բանկերին՝ առանց կանխավճարի հիպոթեքային վարկ ձեռք բերելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատերը վճարունակ են, ունեն աշխատանք, կայուն եկամուտներ, բավարար գրավի առարկա, բայց չունեն կուտակած գումար՝ կանխավճար կատարելու համար: Այս խմբին են պատկանում հասկապես շատ երիտասարդ, նորաստեղծ ընտանիքներ: Միշտ նորարարական լուծումներ առաջարկող եւ հաճախորդի շահերը գերադասող Զարգացման Հայկական Բանկը հիփոթեքային շուկայի առանձնահատկություններից ելնելով՝ այսօր արդեն հաճախորդներին առաջարկում է նոր հիփոթեքային վարկատեսակ՝ «Հիփոթեքային վարկ առանց կանխավճարի»:

Մեր առաջարկած հիպոթեքային վարկերից կարող է օգտվել Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի: Վարկը լրացուցիչ գրավի առկայության պարագայում հնարավորություն է ընձեռում ձեռք բերել անշարժ գույք առանց կանխավճարի՝ ստանալով վարկ ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված արժեքի մինչև 100%-ի չափով: Առանց կանխավճարի հիպոթեքային վարկերը տրամադրվում են մինչև 10 տարի մարման ժամկետով, մինչև 100 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի գումարի չափով, տարեկան տոկոսադրույքը՝12-18%: Ընդ որում վարկ/(ձեռք բերվող անշարժ գույք և լրացուցիչ անշարժ գույք) առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 60%:

Զարգացման Հայկական Բանկն այս վարկատեսակի տրամադրումն արդեն սկսել է. դիմեք Զարգացման Հայկական Բանկ եւ օգտվեք այս բացառիկ շահավետ վարկատեսակից եւ ունեցեք ձեր բնակարանը, առանձնատունը կամ ցանկացած անշարժ գույք:



**«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ**
**Մանրամասների համար՝**
**Տեղ. հեռախոս՝ 59 15 15**
**www.armdb.com**
**info@armdb.com**

# Հաղորդագրություն Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության XXII արտահերթ Հանրապետական պատգամավորական ժողովի (համագումար) մասին

2012 թվականի ապրիլի 22-ին ժամը 12:30-14:00-ն Երեւանի Թեքեյան կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ ՀՌԱԿ 22-րդ արտահերթ հանրապետական պատգամավորական ժողովը (համագումարը): Համգումարը վարելու համար ընտրված ժողովի ատենապետ **Կարեն Կակոյանը** տեղեկացրեց, որ ՀՌԱԿ 22-րդ արտահերթ համագումարը 19-րդ արտահերթ հանրապետական պատգամավորական ժողովի համար սահմանված քվոտայով հրավիրվել է ՀՌԱԿ 13 շրջանակներից 10-ի պահանջով՝ ապահովելով ձայների 2/3-ը, որն ՀՌԱԿ Կանոնադրության հոդված 72-ի «դ» կետի պահանջ է: ՀՌԱԿ մանդատային Հանձնաժողովի նախագահ **Անահիտ Չորեքչյանի** հաղորդմամբ ՀՌԱԿ 22-րդ արտահերթ համագումարին ներկա են 153 պատգամավորներ: Բաց քվեարկությամբ համագումարը միաձայն որակվեց օրինական եւ իրավազոր, քանի որ ներկա են 19-րդ արտահերթ հանրապետական պատգամավորական ժողովի համար սահմանված քվոտայով պատգամավորների անհրաժեշտ 2/3-ից էլ առավել պատգամավորներ (ՀՌԱԿ կանոնադրության հոդված 77): Օրակարգի հարցերը՝

ՀՌԱԿ վերակազմակերպման միջոցով միաձուլման մասին,

ՀՌԱԿ ատենապետ Էդվարդ Անտինյանի որպես ՀՌԱԿ գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման մասին,

ՀՌԱԿ նոր ատենապետի եւ Հանրապետական վարչության ընտրություններ, Միաձուլման պայմանագրի եւ Փոխանցման ակտի նախագծի հաստատման մասին, ՀՌԱԿ եւ ԱրմենականՌԱԿ համատեղ համագումարին մասնակցելու մասին:





Որոշվեց՝

ՀՌԱ եւ Արմենական-ՌԱ կուսակցությունները վերակազմակերպման միջոցով միաձուլել նոր հիմնադրվող Ռամկավար Ազատական Կուսակցությունում (Հայաստան):

ՀՌԱԿ Կանոնադրության 76, 84 հոդվածների պահանջների համաձայն Հարություն Առաքելյանին հեռացնել կուսակցության շարքերից:

2004 թվականին ՀՌԱԿ Հանրապետական Վարչության որոշմամբ, կուսակցության շարքերից անհիմն եւ անօրեն հեռացված Ռուբեն Միրզախանյանին, Գայանե Մուրադյանին, Շամիրամ Աղաբեկյանին (հետմահու), Լավրենտի Բարսեղյանին եւ Սերգեյ Գալստյանին վերականգնել կուսակցության շարքերում:

Համագումարն ընտրեց ՀՌԱԿ Հանրապետական նոր վարչություն: Համագումարի պատգամավորներից ընտրվեցին Միավորիչ համագումարի 50 պատգամավորներ:

ՀՌԱԿ XXII արտահերթ Հանրապետական Պատգամավորական ժողովը հանձնարարեց եւ լիազորեց նորընտիր ՀՌԱԿ Հանրապետական վարչությանը, մամուլում հայտարարություն տալուց հետո առնվազն մեկ ամսից, կազմակերպել ՌԱԿ (Հայաստան) հիմնադիր՝ ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ վերակազմակերպման միջոցով միալձուլման միասնական հանրապետական պատգամավորական ժողովը (համագումարը):

# Հաղորդագրություն Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության 3-րդ արտահերթ Հանրապետական պատգամավորական ժողովի

2012 թվականի ապրիլի 22-ին ժամը 15:00-16:00-ն Երեւանի Թեքեյան կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ Արմենական-ՌԱԿ 3-րդ արտահերթ հանրապետական պատգամավորական ժողովը: Համագումարը վարելու համար ընտրված ժողովի ատենապետ **Սուրեն Սարգսյանը** տեղեկացրեց, որ Արմենական-ՌԱԿ 3-րդ արտահերթ համագումարը հրավիրված է կուսակցության կանոնադրության համապատասխան կետերի բոլոր պահանջների համաձայն, հետեւապես՝ օրինական է: Ներկայացել էին 80 պատգամավորներից 76-ը: Քվեարկությամբ համագումարը միաձայն որակվեց օրինական եւ իրավազոր:

Օրակարգի հարցերը՝

1. Արմենական-ՌԱԿ եւ ՀՌԱԿ միավորման մասին (զեկուցող՝ ատենապետ Հակոբ Ավետիքյան):
2. Միավորման պայմանագրի նախագծի ներկայացում (զեկուցող՝ Սիրո Գեւորգյան):





3. Փոխանցման ակտի ներկայացում (զեկուցող Գայանե Մուրադյան):

Որոշվեց՝

1. Արմենական-ՌԱ եւ ՀՌԱ կուսակցությունները վերակազմակերպման միջոցով միաձուլվել նոր հիմնադրվող Ռամկավար Ազատական Կուսակցությունում (Հայաստան):
2. Արմենական-ՌԱԿ 3-րդ արտահերթ հանրապետական պատգամավորական ժողովը հանձնարարեց եւ լիազորեց Հանրապետական վարչությանը, մամուլում հայտարարություն տալուց հետո առնվազն մեկ ամսից կազմակերպել ՌԱԿ (Հայաստան) հիմնադիր՝ ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ վերակազմակերպման միջոցով միալձուլման միասնական հանրապետական պատգամավորական ժողովը (Համագումարը):
3. Համագումարի պատգամավորներից ընտրվեցին Միավորիչ համագումարի 50 պատվիրակներ:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Հակոբ Գասարճեանը պարգեւատրվեց Մխիթար Գոշի մեդալով

Ապրիլի 27-ին ՀՀ սփյուռքի նախարարը Մխիթար Գոշի մեդալ հանձնեց լիբանանահայ քաղաքական, հասարակական գործիչ Հակոբ Գասարճեանին, ով Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ պարգեւատրվել է ՀՀ նախագահի հրամանագրով՝ հայապահպանության գործում ներդրած ծանրակշիռ ավանդի, հայրենիքին մատուցած ծառայությունների, ինչպես նաեւ Հայաստանի եւ օտարերկրյա պետությունների միջեւ բարեկամության ամրապնդմանը մեծապես նպաստելու համար:

Հակոբ Գասարճեանը ծնվել է 1946թ. Լիբանանում: Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանը, զբաղվել գործարարությամբ: Երիտասարդ տարիքից ակտիվ գործունեություն է ծավալել Հայկական բարեգործական ընդհանուր միությունում, Ռամկավար ազատական կուսակցությունում եւ Թեքեյան մշակութային միությունում:

Այնուհետեւ Հ. Գասարճեանը հաստատվել է Ֆրանսիայում, ակտիվորեն զբաղվել է համայնքային գործունեությամբ, վարել է ՀԲԸՄ Ֆրանսիայի շրջանային հանձնա-



ժողովի ատենադպիրի պաշտոնը: 1995 թ. եւ 1998 թ. ընտրվել է Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ: Հ. Գասարճեանը Հայաստանում իրականացրել է մի շարք բարեգործական ծրագրեր:

Այնուհետեւ Հ. Գասարճեանը վերադարձել է Լիբանան: 2000 թ. նա ընտրվել է Լիբանանի խորհրդարանի պատգամավոր, 2005 թ.՝ վերընտրվել: Եղել է Թեքեյան մշակութային միության Հիմնադիրների մարմնի անդամ, այնուհետեւ՝ նույն մարմնի ատենապետ:

Այժմ Հ. Գասարճեանը Հայաստանի «Անելիք Բանկ» ՓԲԸ խորհրդի նախագահն է:

Լիբանանում նա շարունակում է ակտիվորեն զբաղվել քաղաքական, հասարակական գործունեությամբ:

**ՀՀ սփյուռքի նախարարության լրատվության ծառայություն**

*«**Ազգ**»-ը ջերմորեն շնորհավորում է Հակոբ Գասարճյանին բարձր պարգեւի համար:*

**Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է մրցույթ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար**

**1. Ռեժիսուրայի ամբիոն**
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր

***Ծանոթություն.***
Հավակնորդները համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում.
▼ դիմում ռեկտորին,
▼ կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,
▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,
▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
▼ գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
▼ տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
▼ տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր, սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտական քարտուղարին:

Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, N 301 սենյակ, հեռ. 59 70 28:

**ՌԵԿՏՈՐԱՏ**

# Բաքուն անցնում է պատշաճության բոլոր սահմանները

Թուրքական «Ջումհուրիեթը» աներկմիտ հարց է ուղղել Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի վարիչ Ալի Հասանովին, թե ինչո՞ւ «եղբայրական երկիրը» չի ճանաչում «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը»: Հասանովն էլ շատ անկեղծորեն պատասխանել է. «Մենք դա կանենք Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումից հետո»: Նույն հարցով որոշակի ակնարկներ արել էր նաեւ Իլհամ Ալիեւը, երբ Բաքվում ընդունել էր Թուրքիայի վարչապետին: Բայց Հասանովի հայտարարությունը որեւէ վերապահում, ենթատեքստ, երկիմաստություն չունի. «Եթե մենք այսօր ճանաչենք «ՀԿԹՀ» (չակերտները մերն են- Վ. Ա.) անկախությունը, ապա Հայաստանի դաշնակից երկրներն էլ նույնը կանեն ԼՂ-ի հանդեպ»,- պարզ ասել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի բարձրաստիճան չինովնիկը: Նա, անշուշտ, ինչեցրել է պաշտոնական տեսակետ:

Ստացվում է այնպես, որ Ադրբեջանը, լռջորեն աշխատելով ԼՂ-ի հարցով բանակցություններում «սկզբունքային առաջընթացի» հասնել նաեւ Եվրոմիության աջակցությամբ, իրականում նպատակադրված է «ամեն ինչ կարգավորելուց հետո» ճանաչել «ՀԿԹՀ» անկախությունը: Այսինքն, մասնատել Եվրոմիության անդամ Կիպրոսի տարածքային ամբողջականությունը, ոտնահարել այդ երկրի ինքնիշխանությունը, որը ճանաչված է ողջ միջազգային հանրության կողմից, քանի որ Թուրքիայից բացի որեւէ երկիր չի ճանաչում «ՀԿԹՀ»-ն:

«Թուրքիայից հետո երկրորդ երկիրը, որտեղ ուսանելու են մեկնում մեր ավելի շատ երիտասարդներ, «ՀԿԹՀ»-ն է»,- ասել է Ալի Հասանովը: Մի քանի տարի շարունակ գործել է Բաքու-Նիկոսիա ուղիղ օդային կապը: Կիպրոսի բողոքներից հետո դրանք «դադարեցվել են»: Հայտնի է, սակայն, որ «ՀԿԹՀ»-ն օդային կապ ունի Թուրքիայի հետ: Որեւէ խնդիր չկա, որ Բաքու- Ստամբուլ չվերթի օդանավը կարճատեւ դադարից հետո ուղղություն վերցնի դեպի «ՀԿԹՀ» եւ բարեհաջող վայրէջք կատարի Նիկոսիայի օդանավակայանում: Այսինքն, Ադրբեջանը փաստացի կապեր ունի «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հետ: Բաքվից նաեւ պաշտոնական պատվիրակություն էր ներկա գտնվել «ՀԿԹՀ առաջին նախագահ» Ռաուֆ Դենկթաշի հուղարկավորությանը:

Ահա այս իրավիճակում իրավասո՞ւ է Ադրբեջանը պահանջելու, որ միջազգային հանրությունը «հարցի տարածքային ամբողջականության» սկզբունքը: Որքանո՞վ են օրինական արտաքին աշխարհի հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական, մշակութային, գիտակրթական, մարզական կապերը «շրջափակելու» Ադրբեջանի գործողությունները: Ինչո՞ւ պիտի ԼՂ խնդիրը «կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում»: Որպեսզի Ադրբեջանը հնարավորություն ստանա անարգել ճանաչելու «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» անկախությո՞ւնը:

Պաշտոնական Բաքուն, ինչպես վկայում է Ալի Հասանովի հարցազրույցը, որդեգրում է «ուժի իրավունքի» քաղաքականություն: Հաշվարկն այն է, որ «էներգետիկ կախվածության մեջ լինելով», Եվրոմիությունը պիտի «աշխատի, որ ԼՂ հարցը լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում»: Իսկ հետո Բաքուն կանի այն, ինչ նպատակահարմար կգտնի: Իսկ նպատակահարմարությունն այն է, որ գործի «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը:

Ինչպիսի՞ն կլինի միջազգային հանրության, մասնավորապես Եվրոմիության արձագանքը: Կլինի՞: Հազիվ թե: Ալի Հասանովն այնքան հիմար չէ, որ իր երկրի համար լրացուցիչ բարդություններ ստեղծի: Բայց դա չի նշանակում, թե ԵՄ-ի երկրներն աչք կփակեն Իլհամ Ալիեւի «հաղթական» կեցվածքի հանդեպ: Ըստ երեւույթին Ադրբեջանի պահվածքի դիմաց միջազգային հանրությունը «կվճարի նույն տարադրամով»: Քանի որ հակառակը կնշանակեր, որ Եվրոմիությունն իր անդամ երկրի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության ոտնահարմամբ է «վճարում» ադրբեջանական ենթադրյալ գազի դիմաց: Իսկ դա էլ իր հերթին կնշանակեր մի ողջ արժեհամակարգի փլուզում:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**



# Բան Կի Մուն. «Սիրիան չի կատարում խաղաղ կարգավորման ծրագիրը»



ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը Սիրիայի իշխանություններին մեղադրել է երկրի իրադրության խաղաղ կարգավորման ծրագիրը չկատարելու մեջ: Այդ մասին հաղորդում է Ֆրանս պրես գործակալությունը:

Երեկ հրապարակված հայտարարության մեջ գլխավոր քարտուղարը «լուրջ տագնապ» է արտահայտել սիրիական քաղաքներում շարունակվող հրետակոծությունների, ինչպես նաեւ բնակավայրերում ծանր ռազմական տեխնիկայի առկայության փաստերի կապակցությամբ: Տեղեկությունները նա ստացել էր ՄԱԿ-ի առաքելության դիտորդներից:

Բան Կի Մունը ընդգծել է, որ նման իրավիճակը «անթույլատրելի» է եւ հակասում է խաղաղ կարգավորման ծրագրի շրջանակներում նախագահ Բաշար Ասադի ստանձնած «անհետաձգելի գործողությունները»:

ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ դեսպանորդ Կոֆի Անանի առաջարկած խաղաղ կարգավորման ծրագիրը նախատեսում է սիրիական քաղաքներից զորքի եւ ծանր տեխնիկայի լրիվ դուրսբերում, ինչպես կառավարական ուժերի, այնպես էլ ապստամբների կողմից բռնարարքների դադարեցում: Ծրագրի կատարումը պետք է վերահսկեն ՄԱԿ-ի 300 դիտորդներ, որոնցից 15-ը Սիրիայում արդեն սկսել են իրենց աշխատանքները:

Հրադադարը պաշտոնապես գործում է ապրիլի 12-ից: Չնայած դրան, երկրից ստացվող լուրերը վկայում են կառավարական զորքերի եւ ապստամբների նոր բախումների մասին: Հրադադարի հաստատումից հետո սպանված անձանց թիվն անցնում է 300-ից:

# ՌԴ օդուժի գլխավոր հրամանատարը պաշտոնանկ է արվել



ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը պաշտոնից ազատել է օդուժի գլխավոր հրամանատար Զելինին, նշվում է Կրեմլի մամլո ծառայության հաղորդագրության մեջ: Բացի դրանից, նախագահի հրամանով Զելինը արձակվել է զինվորական ծառայությունից: Գեներալի հեռացման պատճառը չի հրապարակվում: Նա օդուժի գլխավոր հրամանատարն էր 2007-ից, իսկ հնարավոր պաշտոնաթողության մասին լուրեր էին պտտվում 2009-ից:

2011-ի հոկտեմբերին «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթը գրեց, որ ՌԴ օդուժը «շուտով այլեւս գոյություն չի ունենա որպես ինքնուրույն զորատեսակ»: Թերթի տվյալներով, կազմավորվող հրամանատարությունը կարող է վարչություն դառնալ օդատիեզերական պաշտպանության զորքերի կազմում:

Կարգավիճակի կորուստը սկսվել էր ավելի վաղ, երբ օդուժի ռազմակայանները հանձնվել էին զինվորական օկրուգների ենթակայությանը:

Մեդվեդեւի հրամանագրերի համաձայն, պաշտոններից ազատվել են նաեւ ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ Վալերի Գերասիմովը, ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Ալեքսանդր Պոստնիկովը եւ Կենտրոնական զինվորական օկրուգի զորքերի հրամանատար Վլադիմիր Չիրկինը: Նրանք նշանակվել են համապատասխանաբար Կենտրոնական զինվորական օկրուգի հրամանատարի, ՌԴ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի եւ ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոններում:

# Գերմանիայի դեսպանատունը կառավարող «Ենի Ազարբայջան» կուսակցությանը «հիմար» է անվանել

Ադրբեջանի կառավարող կուսակցության «Ենի Ազարբայջան» պաշտոնաթերթը հերթական անգամ հոդված է հրապարակել, որտեղ Գերմանիայի մասին խոսվել է իբրեւ «կոռումպացված, մարդու իրավունքները պարբերաբար խախտող եւ թուրքերին չսիրող երկրի» մասին: Օրերս մի շարք այլ երկրների՝ Ադրբեջանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հետ Գերմանիայի դեսպանն էլ այցելել էր ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության կենտրոնակայան, որտեղ «քննարկվել են ներքաղաքական իրավիճակի հարցեր»: Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Զիաֆեթ Ասկերովը դա համարել էր «կոպիտ միջամտություն երկրի ներքին գործերին» եւ օտարերկրյա դեսպաններին «դիվանագիտական էթիկայի դասեր էր տվել»:

Կառավարող կուսակցության պաշտոնաթերթի հարձակումները Գերմանիայի հասցեին տեղավորվում են ընդդիմության հետ այդ երկրի դեսպանի շփումները սահմանափակելու՝ իշխանությունների մտադրության շրջանակներում: Գերմանիայի դեսպանատան արձագանքը, սակայն, սպասվածից ավելի բաց, ընդ որում՝ կոշտ եւ կառավարող կուսակցության համար խիստ վիրավորական էր: Contact.az-ի տեղեկագրմամբ, դեսպանատան տարածած հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. «Թերթը («Ենի Ազարբայջանը»-Վ. Ա.) հարձակումներ է սկսել գերմանական քաղաքական շրջանակների դեմ, ստեղծելով կեղծիքի մթնոլորտ եւ խախտելով բաց բանավեճի սկզբունքը: Այդուհանդերձ, Գերմանիայի դրական իմիջը կոպիտ խեղաթյուրումներով վարկաբեկելու փորձերը դատապարտված են, քանի որ ադրբեջանցիների մտավոր մակարդակը բարձր է»:

Վերջին ձեւակերպումը եթե դիվանագիտական լեզվից «թարգմանենք», ապա կստացվի, որ Բաքվում Գերմանիայի դեսպանատունը Ադրբեջանի կառավարող կուսակցությանը մեղադրում է մտավոր մակարդակի բացակայության, այն է՝ հիմարության մեջ: Սույն որակավորման գլխավոր հասցեատերն, անշուշտ, Իլհամ Ալիեւն է, քանի որ գլխավորում է կառավարող կուսակցությունը եւ առանց նրա հրահանգավորման «Ենի Ազարբայջան» պաշտոնաթերթը չէր համարձակվի վայրահաչել Գերմանիայի դեմ: Ինչպե՞ս կուլ կտա վիրավորանքը Ադրբեջանում նախագահի պաշտոն զբաղեցնողը: Կհամարձակվի՞ հակադարձել, թե՞ տեսք կընդունի, որ «հիմարն ինքը չէ»:

**Վ. Ա.**

# Լիբերիայի նախկին նախագահը ճանաչվեց պատերազմի հանցագործ

*Պենտագոնը գործակցել է նրա հետ*

**Հաագայի միջազգային դատարանը Լիբերիայի նախկին նախագահ Չառլզ Թեյլորին մեղավոր է ճանաչել հարեւան Սիեռա-Լեոնեի ապստամբներին զինելու եւ օգնելու մեջ, ինչը հանգեցրեց այդ երկրի խաղաղ բնակչության դեմ 10-ամյա ահաբեկչական արշավի: Այդ մասին հաղորդում է RFI ռադիոկայանը:**

**Քննիչները պարզել են, որ Թեյլորը ամեն կերպ օժանդակել է Միացյալ հեղափոխական ճակատի՝ RUF-ի գործունեությանը, ահաբեկիչների զինամատակարարման դիմաց նրանցից ստանալով թանկարժեք քարեր: Դատարանը դրանք անվանում է «արյունոտ ալմաստներ»: Ահաբեկիչներն ապօրինաբար արդյունահանված թանկարժեք քարերը Լիբերիայի բռնապետին էին փոխանցում մայոնեզի բանկաներով:**

**64-ամյա Թեյլորը մեղադրվում է 11 կետերով, որոնցից են սպանությունները, բռնաբարությունները եւ ահաբեկչական գործունեությունը, ինչպես նաեւ մարդակերությունը եւ Սիեռա-Լեոնեում զինված հակամարտության հրահրումը: Թեյլորի մասնակցությամբ սանձազերծված քաղաքացիական պատերազմում զոհվեց ավելի քան 120 հազար մարդ:**

**Սիեռա-Լեոնեի քաղաքացիների դեմ Թեյլորի գործած ոճիրների դատավճիռը կհրապարակվի մայիսի 30-ին:**

**Չառլզ Թեյլորը Լիբերիայի նախագահն էր 1997-2003 թթ. եւ հրաժարական տվեց ԱՄՆ-ի ճնշմամբ: Երեք տարի անց նա ձերբակալվեց Նիգերիայում եւ հանձնվեց Հաագայի դատարանին: Թեյլորի գործով ցուցմունքներ տված 100 վկաներից մեկը սուպերմոդել Նաոմի Քեմփբելն է: Նա հայտարարեց, որ 1997-ին բռնապետն իրեն նվիրել է մի քանի թանկարժեք քար:**



**Նաեւ որոշվեց, որ 1980-ականների սկզբներին Թեյլորի հետ համագործակցել է Պենտագոնը: Ամերիկացի զինվորականները խոստովանեցին, որ 1985-ին ապագա բռնապետին օգնել են փախչելու Բոստոնի բանտից, իսկ հետագայում նպաստել են, որ նա Լիբերիայում անցնի իշխանության գլուխ: Դրա դիմաց ԱՄՆ-ը Թեյլորից տեղեկություններ է ստացել Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի, աֆրիկյան երկրների անօրինական զինամատակարարումների եւ տարածաշրջանում ԽՍՀՄ-ի շահերի վերաբերյալ:**

